մինչև հոկտեմբերի 11-ը հազիվ երեք ամիս անց՝ Զանգեզուր-Օրդուբադի երկրաշարժից հետո։ Նրա նպատակն էր հավաքել թանգարանային ցուցադրության համար անհրաժեշտ կենցաղային առարկաներ, միաժամանակ ստուգել և լրացնել մինչ այդ հրատարակված ազգագրական նկարագրությունները։ Գիտական արշավը իր աշխատանքների համար որպես կենտրոնական վայր ընտրեց Սիսավանը[8], այն ժամանակվա Ղարաքիլիսան, որտեղից այցելեց Անգեղակոթ և Բռնակոթ, ապա անցավ Գորիս, այնտեղից՝ Խնձորեսկ, կրկին՝ Գորիս և Քարահունջ ու Հալիձոր գյուղերով հասավ Տաթև, որտեղից ուղևորվեց Դարբաս (Դարաբաս)—Լծեն—Որոտնա վանք—Վաղուդի—Աղուդի ճանապարհով՝ Սիսավան (Ղարաքիլիսա) և Նախիջևանով վերադարձավ Երևան։ Ազգագրական իրերի հետ բոլոր այցելած վայրերում հավաքվում էին նաև հնագիտական կարևոր իրեր (բրոնզե դարից մնացած զենքեր և զարդեր, երկրաշարժից ավերված Տաթևի վանքի երկու դռները. «սրբությունները»՝ հռչակավոր խաչափայտը, ս. Հակոբի «մասունքները», ձեռագիրներ և այլն)։

Հաջորդ տարին նույն նպատակով Զանգեզուր գործուղվեց Պետական պատմական թանգարանի Ազգագրական բաժնի երկրորդ գիտարշավը։ Այս անգամ նա պիտի իր աշխատանքները փոխադրեր Կապանի վարչական շրջանը, որը նախորդ տարին անհնարին էր եղել այցելել։ Գիտարշավը նույն անձնակազմով, միայն հրավիրված նոր լուսանկարչով (Պողոս Գրիգորյան) սկսեց էքսպոնատների հավաքումը և ազգագրական նյութերի գրանցումը Մեղրուց և ուղղվելով դեպի հյուսիս՝ Տաշտունիի (Դիբագլուի) լեռնանցքով տեղափոխվեց Կապան։

Մարշրուտը հետևյալն էր. Ողջի ձոր (Օխչի ձոր)—Կապան հանքեր—Արծվանիկ—Վաչագան—Բեխ—Հալիձորի բերդ—Գեղանուշ (Գյուտկում)—կրկին հանքեր—Պառավաթումբ—Բաղաբերդ—Գեղի—Քյուրուտ, Բարգուշատի (Բերգուշետի) լեռնաբաղուկի վրայով՝ Ախլաթյան-Սիսիան (Սիսավան-Ղարաքիլիսա)—Նախիջևան։ Գիտարշավը մեկնեց Երևանից հունիսի 16-ին և վերադարձավ օգոստոսի 9-ին։

Երկու գիտարշավների միջոցով թանգարանի Ազգագրական բաժինը ձեռք բերեց ազգագրական առարկաների բավական հարուստ ժողովածու՝ 290 իրերից բաղկացած։ Այդ ֆոնդի հիման վրա կազմակերպվեց նախ հաշվետու ցուցահանդես և ապա մշտական ցուցադրություն, որտեղ Զանգեզուրի և Մեղրու անցյալ՝ «մահացող» կենցաղային երևույթներին կից տրված էր մի պատկեր այն արմատական փոփոխությունների, որոնք տեղի են ունենում այդ գավառների նիստուկացի բոլոր ճյուղերի մեջ սովետական կարգերի հաստատումից հետո։

Ներկա աշխատության մեջ ամփոփում ենք թե՛ մեր և թե՛ ուրիշների գրանցման դիտողությունները՝ առանձնապես կանգ առնելով մեր գիտարշավների հավաքած կենցաղային իրերի նկարագրության և ուսումնասիրության վրա։ Տալիս ենք միայն նախասովետական ժամանակի Զանգեզուրի ազգագրական պատկերը, գլխավորապես հայ բնակչության, համեմատաբար ավելի քիչ շոշափելով ադրբեջանական կենցաղի երևույթները, որոնց գրանցման միջոցին դրսից եկած այցելու հետազոտողներս հանդիպում էինք դժվար հաղթահարելի անվստահության։ Անհրաժեշտ ենք համարել պահպանել խիստ զգուշություն և

[8] Այժմ կոչվում է Սիսիան (Ծան. խմբ.)։